

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅՕՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Սայիս 2. Երժանապատիւ Ստեփաննոս Վարդապետն Մխիթարեանց Հին-Նախիջևանայ Յաջորդ կարգեցաւ ի տեղի Յովհաննէս Վարդապետի Տէր Յարութիւնեանց, որ արձակուեցաւ յիշխալ պաշտօնէն՝ զննութեան ննթարկուելով:

— **11.** Ըստ խնդրանայ և վկայութեան հասարակութեան Հայոց Հին-Նախիջևանայ, ի բաւական ժամանակաց հետ, քահանայադործութենէ բոլորովն դադարած Կաթակոն Օւքարեանց զինեմելութեան ախտէն ըստ ամենայնի հեռացած լինելով՝ իւր ի սրտէ զյջմամբ և աստաշխարութեամբ, կրքին Հայաստանեայց Ազկեղեցւոյ ծոցը ընդունվեցաւ միանգամայն հրամանատարելով քահանայութեան պաշտօն կատարելու, բացի Ս. Պատարագ մատուցանելոյ:

Եւ ի յագուդ նեաւրբութեան բանասիրաց:

Զայն զայս յիշատակարան յաւկապէս յօրինեալ եւ գրեալ է բարեպաշտ եւ ուսումնասիր բազաւորն Հայոց Հեթում Բ. ի վերջ Աստուածաւելի միայն բնիւր օրինակի, զոր յիւր ի վայելիս գաղափարեալ է յնհրեազայն օրինակի Ստեփաննոս անուն ձեռունի ուն, ի վերայ մագաղաթի, բոլորագիր, գեղանի գրութեամբ, յորին Հայոց Ձեռն. եւ ի փրկչական 1295:

Յակիգրն սորին (յիշատակարանի) զոյ այսպիսի խորագիր, „ԱԻՐԶՆՈՒԹԻՒՆ ՈՐ ԿԱՐԴԱՅ, ԳՈՎՈՒԹԻՒՆ ՈՐ ԼՍԷ, ՓԱՌՔ ՏՈՒՍԻՂԻՆ, ԵՒ ՅԻՇԱՏՏԱԿ ԳՐԶԻՍ: ԱՄԵՆ: ԹՈՒԱԿ. ՁԵՌ. ԳՐԵՅԱԻ: Զոր եւելի գրեալ յիշատակեալ Ստեփաննոս: Իսկոսանաւոր յիշատակարանիս ոսկեգօծ գլխաւորման միայն ոչ էն ինքնաձեռագիր բազաւորին, այլ Ստեփաննոս գրչին:

Յաւաւս սորին է եւ տեղի քառանկիս Գաւաւորման կնիք, զոր ամոզ, անհաքագաւ իմն օտար ձեռք հասեալ բարձեալ է ի բաց:

Ս.

— **21.** Երժանապատիւ Գրիգոր Վարդապետն Տէր Ստեփաննոսեանց Ս. Եթռոյս զանձապետ կարգեցաւ, փոխանակ Երժանապատիւ Եսայի Վարդապետի, որ իւր անձնական տկարութեան համար Տփլիս օդափոխութեան զնալու թողաւ թիւն ստացաւ:

Սինօդի Ետեւարպիր Պ. Սաքխաթաղիանոսեանցը յատուկ պաշտօնով միամենայ միջոցաւ զնայ ի Հին-Նախիջևան:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ՆԱԽԱԿ ԿԱՐՍԻՅ

... Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

... Եւ ժամ բերկրաւ թ լուր մը կը հաղորդեմ, որ եթէ Երարատայ միջոցաւ հրատարակու լինիք, կանխապէս շնորհակալութիւնս կընդունիք: Վաղաքիս վարժարանը բաւական թուով աշակերտներ ունի և զըստ ըրցական տարեգլուխն Ս. Լուսաւորչի տօնին ըլլալուն՝ միամենայ շրջանի քննութիւնը ըրած եմք: Յետ աւարտման Ազկեղեցւոյ ժամը Յին սկսեցինք քննութիւնը, ուր հրաւիրեալ էին Հոգմէականաց երկու վարդապետներ իշխանօրն, Աուսիոյ Վսեմ. Ազկեհա պարոն Յովհաննէս Ունձեան իւր թարգմաններով: Վերականութեան երկրորդ մասի աշակերտաց քննութիւնը սկսաւ անոնցմէ մէկուն կարգացած մէկ ճառով. արդարեւ զովութեան արժանի էր աշակերտաց յառաջադիմութիւնը որ հայկական ոճերու ունեցած հմտութիւնին սքանչելի կերպով ցուցուցին. յետոյ 1-դ մասի աշակերտաց քննութիւնն եղաւ՝ որ նոյնպէս կարճ միջոցի մը մէջ ունեցած յառաջադիմութիւնն սքանչելի է, այս քննութիւնը դե-

ղեցիկ ճառերով և երգերով կրքեմն կրքեմն կընդմիջէին. ասոնք երեք ժամէն աւելի աւելցին. յետոյ Հռիփսիմեան Օրիորդաց զըստոյն աշակերտուհիք իրենց ընթերցանութեան և զրաւարժութեան քննութիւննին առին: Յետոյ երբ մանր ուսմունք անուամբ Վրիտտոնէական Վարդապետութեան հարց պատասխաննին սկսան (զոր ամբողջ բերան ըրած էին), Տեղւոյս Մութասարրօք իւր ամբողջ ժողովականներով, սցսինքն՝ Վատըր, Մութասէպէճի և վիճուհի քաղաքիս և զրազիրք կառավարութեան ճիշդ այս միջոցին հասան (զՅաշայն օր յառաջ հրաւիրած էի թաքրիրով). ուր յետ հարց պատասխանւոյ, տոճկերէն ճառ մը և քանի մը երգ ալ կարդացուելով Հանդէսը գոցեցինք ատենաբանութեամբ մը: Այլ բանէ օրը տեսնալով որ օրիորդաց մայրեր զըկուեցան այս դեղեցիկ հանդէսէն, զինի Ս. պատարազի բերինք օրիորդները և ժողովուրդն ալ ամբողջ ներկայ էր, երկու սեռէսլ մեծ և փոքր, ու ամբողջ մանր ուսմունքը բերան քաղեցին: Արդ շքեղութիւնը քաղաքիս նկատմամբ խիստ շատ է և այս առաջին անգամն է որ այսպիսի հանդէս մը տեղի ունեցաւ: Ապրտայ մէջ. մեծ յոյս ունինք որ սոքա կրթեալ հայրեր և մայրեր պիտի ըլլան: Ապրտայ ապագայի համար, օտարազգիք նախանձեցան. տեղւոյս Հայկաբանութեան դասատուն Բաղիշեցի Սողոմոնեան Վրիգոր պատուելին է, որ անխոնջ կաշխատի և երաժշտութեան դասատուն նորին աշակերտ պարոն Սամբրէն է: Չմոռանանք որ թուաբանութեան դասախօսութիւն ունինք և աշխարհագրութեան, բայց դեռահաս են ասոնց մէջ. այսչափս բաւական կը համարւիմ:

ՇԱՄԱԽԻՈՅ ՆՈՐԱԲԱՅ ԳՊՐՈՅՆ ԵՒ ՆՈՐԸՆՏԻՐ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ:

Շամախույ վիճակին Հողեր Տեսուչ Վերապտոխ Ս. Ենդրէաս Ապիսիոպոս՝ Բաղուոյ նորակառոյց եկեղեցւոյ օծման առթիւ՝ արդու տոնաբանութեամբ և յորդրանօք տեղւոյն Հայսզգի ժողովրդեան ուսումնասիրական զբոսմունքները կրթութեայ շարժել, հետեւաբար սնդ ծխական դպրոց կը բանայ Հայ մանկաւոյն լուսաւորութեան և կրթութեան համար. և նորա բարեք ու արդիւնաւոր զորդացման ազագու, ժողովրդեան ընտրութեամբ՝ իւրաքանչիւր ժամայ նախով Հոգաբարձու կը կարգէ հետեւալ 6 անձինք՝ բարեկրօն Թադէոս աւագ քահանայն Բաղադեանց, պարոնայք՝ երիցփոխան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ՝ Զաւար Մէլքեանց, Վրիգոր Այվադեանց, Ռաֆայէլ Պօպօլեանց, Վրիգոր Թումայեանց, Յակովբ Ապրիսեանց: Նաև յիշեալ Վալրոյն ինպաստ՝ արքունի գանձարանի ծառայող Հայք իւրաքանչիւր տարի երկու հարիւր արծաթ ուրլի կը խոստանան նուիրել. և երիցփոխան Պ. Զաւարն Մէլքեանց հինգ սննեակներէ բաղկացեալ իւր սկսհական տունը երկամեայ ժամանակով Վալրոյն կը յատկացնէ առանց վարձու՝ մինչև նոր դպրոցին շինուիլը եկեղեցւոյ բակին մէջ:

Ահա Զաւար Վաթղիկոսը Հայրապետական կոնդակներով օրհնելով և զովելով Բաղուոյ Հայոց, արքունի գանձարանի հայ ծառայողաց և Պ. Զաւարայ Մէլքեանց ազգասիրական և ուսումնասիրական եռանդները և բարեպաշտ նուէրները, բարեհաճեցաւ հաստատել նորընտիր հոգաբարձուքը: